

ԲԱԺԱՆՈՐՈՒ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոչկարիտի համար  
Տարեկան 10 ռ.  
Վեցամսեայ 5 »  
Արտասահմանի հա-  
մար տարեկան 12 »  
Վեցամսեայ 6 »  
ԿԱՆՈՒԹԻՎ ՎՃՂԲԵՂԻ  
—(—)  
Գրութիւնքի և տպարանի տարի  
—(—)  
Մանուկներու համար 20 սան-  
թիւ և 1 տիպի ան ի սե-  
զաններու համար 20 ՕԴ  
գնդի կրկնայ :

# ՇՆԱԲԱԹ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
ԿԸ ՀԱՅՍՏԱՆԱԿՈՒԹԻ ԶՈՐԵԲՇԱԲԹԻ ԵՒ ՇՆԱԲԱԹ ՕՐԵՐԸ

( ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ )

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Պ. ԿԱՆԶԷԼ

( ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ )

Նամակի և գրքի գրկի  
Խմբագրութեան հասցիին

Редакция на вѣстникъ  
«Шаржумъ»  
Варна.

Redaction du journal  
«Charjoun»  
Varna (Bulgarie)

## ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԱՐԺԱՆԻ

—(—)

Թան՝ աշխարհիս ամենէն նուազ յեղափոխական թերթերէն մէկը, թերթ մը որ չափաւորութեան, հաշտութեան և շրջահայեցութեան ահագին ֆրազներով կը մեծարէ իր բազմազգի ընթերցողները, նոյն իսկ ամենէն կրակոտ ինքիներու ժամանակ, ահա յանկարծ, կրէտէի ազատման եղբայրութեան առջև կը պոռթկայ, զուտ ճշմարտութիւնը կը խօսի և յարգանքով խօնարճելով յեղափոխական առջեւ անոր ներքոյ կը յորինէ, պըտակներ կը գնէ յեղափոխութեան յաւատարմական արձանին վրայ:

«Կրէտացիները, կըսէ ֆրանսական մեծ օտկանը, ցոյց տուին թէ իրենք «արժանի են ազատութեան» որովհետեւ միշտ զէնք բարձրացուցին զայն ձեռք բերելու համար:

Կարելի է ըսել թէ՛ Մահիկին տիրապետութեն ի վեր, տարր տարրայ ժամանակամիջոց մը չէ անցած, առանց աւելի կամ նուազ որոտագին ապստամբութիւն մը պայթելու ու հեղեղանման արիւն հոսելու: և կրէտացի ժողովուրդը, այդ արիւնի օրերուն, միշտ իր գերեզմանին մէջ պառկած է խոցուած, ջարդակոծ՝ այլ անվհատ, պարտուած՝ այլ միշտ յուսալից:

Ատիկայ տեսակ մը գիւցաղներդութիւն է, որուն մէջ կրէտացիին իրաւունք ունի իր անկախութեան տիրոջները փնտրելու: Այդ մը որ այսպիսի անցեալ մը ունեցած է, մեծ ապագայ մը պատրաստած կըլլայ: Եւրոպան հասկցաւ վերջապէս թէ միակ միջոց մը կար Միջերկրականը խաղաղեցնելու: և թէ այդ միջոցը կրէտէի դարաւոր յոյսերը իրականացնելու մէջ կը կայանար:

Կրէտացիները երկու հարիւր յիսուն տարի կրեցին թուրքին տիրապետութիւնը, և երկու հարիւր յիսուն տարի անվհատ կռուութիւնով է որ վերջ գրին այն

տոտապանքներուն, հարածանքին և ցաւերուն, որոնց տոկացած էին երկու հարիւր յիսուն տարի:

Մենք, տակաւին ամիս մը առաջ ամէն կերպով բախտակից էինք կրէտացիներուն, այսօր, ահագին անշարժով մը բաժնուած կը տեսնենք մեզի անոնցմէ: Անոնք այսօրուան ազատներն են, իսկ մենք՝ միշտ երեկուան՝ հինգ դար առաջուան ստրուկները: Անոնք՝ իրենց անդու և յարատեւ դիւցազնութեան մրցանակը ստացան, մենք՝ մեր թուլամորթութեան, կոյր հետեւողութեան, զոհողութեան բացակայութեան, անտարբերութեան և երկպառակութեան պատիժը կը կրենք: Անոնք՝ երկու հարիւր յիսուն տարի կռուեցան. մենք՝ օր մը ձեռնկոծելով՝ խոնջանք զղացիները: և մեր մէջ այնպիսիներ ալ գտնուեցան, վատեր, որոնք գրեթէ ճիշդաբար ուզեցին ներում հայցելու համար:

«Կրէտացիները միշտ զէնք շարժելով է որ ցոյց տուին թէ արժանի են ազատութեան»: Ամբողջ աշխարհի համալուրդը այս է: Եւ մտածել թէ բաւական ջրոտ ուղեղներ կան մեր մէջ, որոնք կը կարծեն թէ տարբեր միջոց մը գոյութիւն կրնայ ունենալ Հայաստանի հինգդարեան ժանգը կրող շղթայները խորտակելու համար: Կոտորի գիտնանք կըռուելով մեզին զգտնանք: և եթէ կռուիլ ու միռնիլ չենք գիտեր, գոնէ կռուողներուն զէնք տալ գիտնանք: . . . Այս է ահա ամէն հայու հաւատքի հանգանակը, աւետարանը: Մեր մինչեւ հիմա բրած ահագին կորուստներուն հակառակ՝ «ազատութեան արժանի» տիրողութեւնը չենք ձգած տակաւին: Հստ է մեր դժբախտութիւնը: Յանցանքը՝ յեղափոխականներու վրայ մը՝ ձգէք. յեղափոխականը ոչինչ է առանց ազգին ձեռնառութեան: Ազգը մինչեւ այսօր այնքան չնչին զոհողութիւններ միայն ըրաւ, որ աւելի մեծ արդիւնքներ տեսնել կարելի չէր, Հայաստանը չէր կրնար փրկուել: Եւ այսօր ամէն

հայ իր ըրած զոհողութիւնը եթէ իր յոյսերուն և ակըղկալութեանց հետ չափէ՝ անշուշտ ամօթէն պիտի կարմրի: Եթէ հարիւր հազարաւորներ զոհ տուինք, յանցանքը դարձեալ ազգին մէջ փնտռենք. որովհետեւ ան՝ զէնք չէր գրած մեր մարտիրոս եղբայրներուն ձեռքին մէջ. ազգին այն մասն է յանցաւոր, — առաջ, զուցէ մեծամասնութիւնը — որ փառաւոր անգործութեան մէջ ընկողմանած՝ յաջող ելք մը կը սպասէ՝ վայելելու համար: և եթէ յուսախաբ ըլլայ կը նեղանայ, կը քննադատէ, կը քֆրէ. . . վայելիլ չը կարենալուն համար:

Կրէտացիները այսպէս չըրին. յեղափոխական, ոչ-յեղափոխական, կէս-յեղափոխական, թըրքամուր, պահպանողական, չէզոք, չես գիտեր ինչ, չկար անոնց մէջ, այլ մէկ բան կար՝ կրէտացի: համակ անձնութիւն, համակ ազատասիրութիւն, համակ զէնք ու վառօդ . . . Եւ սոր համար յաջողեցան: Ա՛լ չպիտի տառապին անոնք, այլ ազգ մը պիտի ըլլան: Ազատութեան արժանի էին ու ազատութիւն տրուեցաւ անոնց: Եւ իրերու լնական ու անյեղի կարգով, մենք ալ մեր ազգային ազատութիւնը պիտի գտնենք այն ատեն միայն, երբ աշխարհի առջև հռչակենք թէ արժանի ենք ազատութեան: Ո՛չ մէկ քաղաքական հաշիւ, ոչ մէկ նենգամտութիւն պատուար չեն կրնար կանգնիլ այդ բանին, և ո՛չ իսկ Ռուսաստանը: Եւրոպոյ երկու հզօրագոյն տէրութեանց՝ Գերմանիոյ և Աւստրիոյ Ապտիլ Համլտի կողմը բռնելը կըրցաւ կրէտէի տրուած ազատութիւնը լրափանելու . . . :

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Շուրջա, 6 նոյնիս.

Այս անգամ կրկին պիտի գրեմ տեղուս հայ տիկիներու հանրային գործունէութեան մասին և ընթերցողը թերեւս իրաւունք ունի կարծելու թէ մեր կիներն ալ կը գործեն այնչափ որչափ մեր այրերը՝ եթէ ոչ աւելի:

Այժմ մենք ազգանց վարժարանի խնամակալութիւնէ զատ ունինք նաև «Հայունհաց բարեգործական ընկերութիւն» մը, հիմնուած ասկէ գրեթէ երկու քուկէս տարի առաջ տեղացի և գաղթական կարօտներու նպաստելու և ուրիշ սեւէ բարենպաստակ գործերով զբաղելու համար:

Անգամուհիք՝ որքան բարեւեր նոյնքան ժրջան՝ տունէ տուն շրջելով բաժանորդներ հայթայթեցին և ջանացին ժողովրդի համեստ լուծայով անանկներու և որբւայրիներու արաստուք սրբել:

Այսանց միջանկեալ կերպով ըսինք թէ վերջին սուսօ-թըքական պատերազմէն ի վեր՝ այդ 20 տարուայ ժամանակամիջոցին մէջ՝ Շուրջայի հայութիւնը նիւթապէս շատ ինկած է: Եւ յետոյ, ըսինք նաև թէ մեր հասարակութիւնը — ինչպէս ամէն սեղ֊տակաւին իր բարոյական զարգացման մէջ այնչափ առաջ գացած չէ որ գիտնայ նուիրելի աւելի գոնի և գոնէ մասնաւորներու բարեսիրական ջանքերուն պէտք եղածին չափ ուժ և մղում տալ:

Ուստի և մեր «Հայունհաց ընկերութեան» անգամուհիք իրենց ձեռնարկին մէջ շունեցան այն յաջողութիւնը, որուն կսպասէին:

Այնու ամենայնիւ իրենք առանց վայրկեան մը վնասելու՝ ցոյց տուին թէ որչափ բարեգործ նոյնչափ յարատեւող են:

Եւ հասարակութեան անտեսական զարգացման գէթ անուղղակի դարկ մը տալու համար, հիմնեցին Սղջկանց Արուեստանոց մը, որ մայրեր պատրաստելու ամենակենսական գործին համար մեր անբաւական վարժարանին մէկ պակասը լրացնելու բնութիւնը ունի:

Այժմ տարիէ մը աւելի է որ այն արուեստանոցին մէջ 12ի չափ 13—18 տարեկան երիտրոններ՝ բաւական ձեռնաս վարժուհի մը անօրինութեան ներքեւ կարել ու ձեւել կը սորվին՝ մանաւանդ իզական սեռի վերաբերեալ ամէն սեսակ հագուստներ, և աչակերտուհիք՝ բացի շատ աղքատներէն՝ ամսական փոքրիկ գումար մը կը վճարեն իրրեւ թոշակ:

ԳԱՐԵՐ-ԱՐՇԱԻՐ

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Յ. Ս. Պուրկազ. — Ձեր թերթերը միշտ կանոնաւորապէս զրկուած են: Ձեր առջին վեցամսեան ստացած ենք 4 ձեռքով:

—(—)

Արուեստանոցին մէջ կը պատրաստուին վերջին նորածնութեան ամենէն նորը եւ ճաշակաւոր քաղաքներ, որոնք զփրախտարար այժմ այնքան մեծ տեղ կը գրաւեն նոյն իսկ հսկաւ գասակարգի պիւտճէին մէջ:

Աւելցնենք նաեւ թէ Շումլայի Աղջկանց Արուեստանոցն այնքան հոգակ հանած է քաղաքիս մէջ, որ մինչեւ իսկ հեռաւոր թաղերէ՛ մօտայի ջերմ սիրահար պուլկարուհիներ հոն կը դիմեն:

Մենք այս տեղ աւելորդ կը համարինք զովասանքներ շտալի մեր այդ բարեգործութիւններուն. որոնք զլուս գլխի առած՝ կը խորհին ու կը գործեն հանրութեան զարգացման եւ յատկապէս ինքնին ապացոյց է: Եւ մենք դիտենք թէ մայրեր պատրաստելու կենսական գործը որքան սերտ առնչութիւն ունի մեր բարոյական ու նիւթական կեանքին հետ:

Կնոջ ազդեցութիւնը մեր ճակատագրին վրայ անդու է, ըսած է Պիքընսֆիլա:

ՎԷՏԱ

ԱՐՁԱԳԱՆԳ

—(—

Բարիքի հայ ուսանողութեան՝ Միութեան և Ակումբի խնդիրները բաւական ծանօթ են մեր ընթերցողներուն: Խնդիրը տակաւին մարած չէ, ինչպէս դատել կուտան մեզ այն նամակները, չըջարեալանները և թուղիկները որոնք կը տեղան Սէնի ակիւնէն: Կերեւայ թէ մի րիններ ընդ ալ իւրացուցեր են ֆրանսական դիւրագրիւն նկարագիրը, և ընդհանուր յորձանքին

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԼՐՏԵՍԻ ՈՐԴԻՆ

Պոլսի ասիական թաղերում մարդի հեքք չը կայ. չչուկ անգամ չէ լրսվում, սրճարաններ ու գինեաներ վազուց փակված են, ժամի 11ն է. մի սեւ ու մութ գիշեր, ով կը համարձակվի այդպիսի տարժամին փողոց դուրս գալ. մանաւանդ 1891 թւականին, երբ ամին հայ կասկածելի եւ վառնգաւոր էր համարվում թուրք կառավարութեան համար, ինչպէս եւ հիմա...

Երբեմն, զանազան անկիւններից լսվում են անօթի շնորհի տոնոցը. երկար, ձիգ եւ մարդի նեարդերը ամբողջովին ցնցող ձայնով. փողոցների ծայրերում սեւին են տալիս ստիկաններ խմբակները, որոնց հետեւում է զիշերապահների երկաթէ գաւազանների շրխկոցը: Մի խօսքով մարդ սարսփում է այդ մտայի գիշերից: Շատ յանդուգն պէտք է լինի այն հայը, որ կարողանար դուրս գալ այս ժամին, եւ այն էլ առանց լապտերի, որի չը լինելը բաւական է արդէն լիովին կասկածելի ցոյց տալ մարդուն կառավարութեան աչքում:

Բայց Սկիւտարի հասարակաց պարտէզի կողքով, գրեթէ պատերի տակով, անցնում է մօտ քառասուն տա-

մէջ՝ իրենք ալ պղտիկ յորձանք մը յօրինենք են, որուն մէջ կը թաւալին: Պ. Միհրդատեանցի անունը մասնաւորապէս կը յիշատակուի. կերեւայ թէ ասանախօտութիւն մը ընելով, հոնաւրական յարկաւորութեան մը մէջ, ձախող բառ մը փախուցուցի էր ընդհին: Իբրեւ Բարիքի հայ ուսանողութեան զպայտմններուն բերան ներկայացուցեր է քանի մը գրական թերթեր, որոնք անխորտիր ամենուն համակրանքը չեն վայելէր: Ասոնց մէջէն՝ «Անտահրաբը կը հասկնանք. բայց «Վաղուան... Զոնիչ»... «Տալիսի»-ն որ մարտի չէ: Եւ ցատկին այն է որ Պ. ասանաւորանը, ենթացքիւ կուտայ թէ իր բոլոր վկայագրերուն հակառակ, ասկաւին շատ թիւր կարծիք մը ունի մեր ազգային իրական կացութեան և պէտքերուն վրայ:

Ասիական անցողակի բռնէ կտքը, փութանք յայտնելու թէ ինչիւրը իր ամբողջութեան մէջ՝ ինչպէս ամենուն նոյնպէս մեր վրայ վերջին ծայր տխուր տպաւորութիւն մը կը թողու: Երեւակայեցէք աշխարհիս ամենէն լուսաւոր կեդրոնին հայ ուսանողները, որոնք փոխանակ իրենց ուղեղները քովէ քով դնելով, ազգին պէտքերովը սողորուած հանճար մը ձեւացընելու, կելլան զիրար բզկտելու, ինչ որ անտարակոյս վկայագրեր և բարձրագոյն կրթութիւն ստացած ըլլալու պէտքը չը զգացընեն: Եւ սակայն կը կարծէ՞ք որ այդ պառակտուածներուն ազբերին մէջ, իր թոյնը թափած

րեկան, մեջմտասակ, ֆէսը մի քիչ աւելի գանկի կողմը թէքված հայ, եւ ասոնց լապտերի Շատ գիշերապահներ եւ ոստիկանների պատահելի նրան մինչեւ այստեղ հասնելը. բայց ոչ ոք ձայն չը հաննց, հանդիպած շներն անգամ լռեցին:

Թէ դասիկան եւ թէ չուն, կարծես գիտէին որ այդ գետուրը հայ լրտես է, Սահփան էֆէնդին, նազիմի եւ Հուսէյնի աջ թեւը, անմատչելի մի արարած...

Սահփան էֆէնդին դնում է դանդաղ քայլերով եւ ինքնիրան մտքի մէջ խօսելով.

—Վերջապէս, այդ չունին տիւ կառավարութեան ձեռքը. որչափ ուրախ էր Հուսէյնի պէտքը. իսկոյն երկու ոսկին սուս. եթէ ամեն օր հայ մը մասնեմ եւ երկու ոսկի ստանամ, ամիսը վաթսուս ոսկի կընէ: Խեղճ Վահէ, հիմա բանան է, եթէ յամառի, քնօթակ պիտի ուտէ: Վերջը, անունս մասնիչ, գաւաճան պիտի ըլլայ եղբւր. ինչ հոգս: Բայց չէ, այդ անպիտան յեղափոխականները միայն մասնիչ ըսելով չեն գոհանար, կը դարնեն. սակայն ինչու կը դարնեն. հա կըսեն որ լրտեսը ազգին կը վնասէ. իսկ ազգին վնասակար հայը պիտի սպաննի հայու ձեռքով: Օ՛ֆ, նորէն այս բաները միայն եկան: Գիտես թէ քիչ մըն ալ իրաւունք ունեն այդ յեղափոխականները. կը վախնամ աստուծուն, խենթ մարդիկ են: Բայց, ինչու ըրի. քանի մը օր ստաջ, լաւ հայ

չըլլայ, մեր հանրածանօթ «Պատակաւիչ Ոգին», Մեծ պառակտիւնը...:

Ուրիշ կուր մըն ալ, ա՛հ, այն բոլորովին տարբեր տեսակէ, տեղի ունեցած է Բագրեւանդի լեռներուն մէջ: Խումբ մը հայ կարիճներ են, որոնք իրենց սրտին ու զէնքին ապաւինած, անոզք թշնամիներու երկար և հոծ շարքի կը ճեղքեն Բագրեւանդէն իրաթ երթալու համար: Անվերջ բախումներու շղթայ մը այս գնացքը, շատ աւելի վտանգաւոր ու տաժանելի քան Բուրուց Նահանջը Բարեւոնէն մինչեւ Սեւ Ծով: Հայ զինավորին անդապելիութիւնն է որ դուրս կը ցայտէ ամէն մէկ միջադէպի պահուն, ապացուցանելով թէ հայը անպարտելի է երբ ձեռքը հրացան մը կը կրէ: Այստեղ այրի մը խուռչէն յանկարծական սլացում մըն է որ ջարդ ու փշուր կընէ քրդերը, որոնք ալ աւելի սարսափահար են զնոյններու ընկերացող հայկական երգերու խորտու ու բամբ հնչելուններէն: Հոն ձեռնամերձ կուրն է որ կը կատարուի մթութեան մէջ, Հրդեհն է որ իր բացերով կը սպառնայ լափելիչել ապաստանարան մը, և կամ նօթութիւնն ու ծարան է որ ուրուականի պէս կը կանգնի դիմացին, ամէն անգամ որ կատարի կռուի մը ետքը, հայ կրտսիճները պահիկ մը շունչ առնել կուղեն անտառի մը թանձրութեան կամ ձորի մը ամայութեան մէջ:

Թշնամին բաղձաթիւ է, հա-

մըն էի, եւ բոլորը, այդ Պերուզն է. վերա ստակ կուզէ, հագվիլ, կտուրիլ, եթէ ոչ ինծի չի սիրէ: Ախ, անոր աչքերը, ուզածիս պէս փայլեցնելու համար՝ ամեն բան կը զոհեմ...

Այս խօսքերը հազիւ վերջացած, Սահփան էֆէնդին մտաւ մի նեղ փողոց, մի քանի քայլ ստաջ գնաց եւ կանգնեց մի երկայակ, բաւական կուրիկ, փայտաշէն անակի առջեւ: Ծածկված եւ պատից դուրս ցցված պատշգամի պատահանի գողում գրված լամպայի լոյսը ընկաւ հայ լրտեսի երեսին: Նրա դէմքը դեղնած էր եւ բաւական նիհար, քիթը գուռայկական, ձակաւը ցած, թաւտայոնքերի տակից պլնտում էին երկու սեւ, փոքրիկ բայց խորամանկ աչքեր: Սահփանը դուրս բախեց, խկոյն պատահանի ճրագը շարժվեց, սենեակը մթնեց, չուսով լսվեց սանդուխների իջնող սոսքերի ձայն եւ մի քանի վայրկեանից դուրս բացվեց ու երեւաց մի բարձրահասակ, մութ գիշերի մազերով, կաւալի աչքերով, հաստ ու սրփոս շրթունքներով եւ բաւական ճկուն՝ մօտ երեսունհինգ տարեկան կին... Դա Սահփան էֆէնդու կինն էր, Փէրուզ հանրմը: Գուար բացած միջոցին նրա շրթունքների վրա խաղում էր հրապուրիչ մի ժպիտ, բայց հենց որ ամուսնու ձեռքերը գիտեց, իսկոյն յօնքերը ժողովեց, ժպիտը անհետացաւ, շրթունքները սեղմվեցին.

—Նորէն ֆիստանցուս չը բերի, չոր կերպով տրտասանեց նա եւ ու-

զարնե ըով կը հաչու ին համիտիէն երբ Գայլերու վոհմակի պէս լափելու կը խուժեն ամէն կէտերէ այդ անվեհեր հերոսները, որոնք սակայն հակառակ ամէն խոչնդոտի կը յաջողին իրենց նպատակին հասնիլ, շատ աննշան կորստներ տալով բազմաթիւ թշնամիին կարեւոր կորուստներուն, և ապացուցանելով հայաստանցիին յեղափոխական առարկնութիւնները: Անշուշտ առաջին անգամը չէ որ այս ապացոյցը կուտայ հայը. քանի որ մինչեւ հիմա, իր ընթացքին մէջ, բնաւ չէ խրոչած թուրքին ո՛չ կախաղանէն, ո՛չ աքսորէն, և ո՛չ ալ զարշելի բանտերէն:

Այս բառը կը յիշեցնէ ինձ բանտերու համաժողովը որ մօտերս պիտի դուստարու Պրիւքսէլի մէջ: Թուրքերն ալ պիտի մասնակցին. ի՞նչ երեսով... Ինչ ճառեր պիտի խօսի արդեօք թուրք պատուիրակը Սուլթանին հայրական հոգածութեան վրայ, որ մինչեւ բանտին խորերը կերկարի: Պոլսոյ թարգմանները անձամբ ստուգած են Բայրաքաղաքին բանտերուն դոհացոյցիչ (•) կացութիւնը. իրաւ է թէ իրենց այցելութեանն օր մը ստաջ, հարիւրաւոր հայ բանտարկեալներ, աւելորդ մասը, ստորերկրայ նկուղիներու մէջ ամբարտած էին ևւրոպական աչքերու շերտաւ համար... Խորագախութիւն աւմէն տեղ. թէ լոյսի և թէ մթութեան մէջ:

զից սանդուխոր բարձրանալ: —Կեցիր զուշիկս, ուր կը փախի վաղը անպատճառ, մինչեւ իրիկուն ստակ չուրելի, հազիւ երկկոյնի տոն նայէ, առ, երկու ոսկի, ամբողջ քիչի, կարողչէքն ալ վաղը:

Սահփանը մի ձեռքով ստակը տեղ կնոջը, իսկ միւսը զիցից նրա երկար սպիտակ եւ բաւական գեր վզովը գլուխը մօտեցրեց իրան եւ աչքերը փայլեցնելով համբուրեց Փէրուզի տաք եւ հաստ շրթունքները. երկար ճամբուրեց, մի քանի անգամ:

—Կեցիր, լամպան կիւնայ, խենթացոր ինչ է, բացականչեց Փէրուզը:

Հեռացաւ ամուսնուց, լամպան զրեց սանդուխորի վրա եւ մի քանի վայրկեան աղաճութեամբ նայեց երկու գեղին ոսկիների վրա: Նրա աչքերը բոցավառվեցին, հրապուրիչ ժպիտը կրկին երեւան եկաւ, նա ինքը մօտեցաւ ամուսնուն, հուսնի բողոկները օձի պէս փաթթեց նրա վզովը եւ շնջաց:

—Ուրեմն վաղն էլ պիտի տաս, նորէն երկու ոսկի, ո՛ւսկէ գտար, Հուսնի՞ն տաւ:

—Հա, վեր երթանք, հոն կը պատմեմ քեզի, լամպան սուր ես բռնեմ, ասեց Սահփանը եւ կնոջ իրանը կէս զրկելով սկսեց բարձրանալ:

Բանտերու վրայ խօսուած ատեն, աչքէ չվրիպիր կուրքօ զօրավարին որդին, որ Մօնթէ Բարլօ իրազարանին մէջ մեծ կորուստներ ընելէ ետքը, մինչև զողութեան աստիճանը զլրբեր է, ու ֆրանսական հողին վրայ ձերբակալուելով, բանտին մէջ անձնասպան եղեր է, մահացու թոյնը նոյն իսկ իջ եղբօր ձեռքերէն ընդունելով: Ասիկա ռուսերկրորդ սպան է որ նոյն շարժումն մէջ վերջ կուտայ իր կեանքին: Երկուքն ալ զարգացեալ, կեանքով ու սպագայով լեցուն երիտասարդներ, լայց երկուքն ալ վարակուած քաղաքակրթեալ ընկերութեան ամենէն կործանիչ ատոր՝ խաղամոլութեամբ: Լօրիս Մէլիքովի՝ հայութեան և Ռուսաստանի այդ վտարին դասակն է որ իր դանկը կը ջախջախէ խաղամոլութեան հետեւանքով: Ինչ անդունդ հօր և զակին մէջտեղ: Եւ այս պահուս զերկզմունին մէջ, ինչ շարժարանքով կը խլրտին արդեօք ոսկորն ինն այդ զիւցաղն հայուն որուն հօր ձայնը միլիտանտները կը ցնցէր, և հանձարը ամբողջ ախարհներ վաստկեց ցարերու կայսրութեան:

Գ. Ա.

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՅԻՇՏԱԿՆԵՐ

—(—

Ու եթէ գրեմ որ, մեր այս իրախճանութիւնն խոկումներու ու խոհերու խառն ժամանց մը ըլլալէ զատ՝ հոգեբանական տեսակ մը ինքնավերլուծում ու ազգային կեանքի անխուսափելի արկածներ ընազգական գիտակցութիւնն եղաւ, կարծեմ՝ շատ սխալած չեմ լինիր. ու անոր համար ալ մարդս՝ որքան ալ սկիսկապիկ կամ քմահաճ լինի, չը կըրնար անգրագիտութեամբ թէ՛ ուրախութիւնն ո՞ր կուսի, ու տըխրութիւնը ո՞ր, յոյսի որ «լալն ու խնդալը» եղաւոր են:

Գրեթէ երեք ժամէն աւելի տեսց մեր առաւօտեան այդ տիրախառն զուարճութիւնն: Ու յետոյ, երբ ամենքս ալ ազգուած իրականութեան սլաքներէն՝ պահ մը լուռ ու անխօս սկսանք զիտել սարն ու ձոր, երկինք ու երկիր՝ որուն վերածնութեան կարօտը կը մրկէր զմեզ, զիւղապետ Շահեն առաջարկեց մեզ միևնոյն խմբով ու սարվազով զիւղը, իրենց տուն մօտիկ պարտէզն երթալ, ու ցորեկուան ճաշն իրենց տունն ընել:

Վերջին անգամ ձեռքերով՝ աւելի անուշ—ուժով մըն ալ ջուր կը խմենք կաթնաղբիւրի մեղրակաթ ակնէն, ու փունջ մը նարդիկ, զինարբուկ ու նուրուֆար քաղելով, անոր ջրով սարգուած մարգերի մէջէն, ու կարօտով ակնարկ մըն ալ դարձնելով այդ Սրտածորի ազբիրին:

Ճառերուն, թռչուններուն, ծաղիկներուն ու մարդերուն՝ կուղի որինք զէպր վանքը, կը մըլունենք նարեկացիի անուան նուիրուած փոռուոր: Ետքը և ազգային փառքի ու կրօնի այդ անզուգական վորդապետի յիշատակարանին երկիւզած լուծեամբ վերջին յարգանքը ու տաք համբոյ՝ մը ձօնելով, կը մեկնինք զէպր գիւղը:

Եթէ կարինի Սանապրեանները, իրենց ամբարնոցը Սրտածոր անունով կնքեր են, հապամենք ինչ անունով որաւենք այն հովիտը, որ բնութեան ամէն զեղեցիկ զարդերով պնտում՝ աղբիւրներն ու առուակներն հիանալի խոխոչների հետ՝ ծառերի ու ծաղիկների մէջ երգող սերուն թռչունների ու լեռների վրայ կպկպացող «կեօզալ» կաքաղների երամներով՝ սրտահովիտ մը ըլլալէ աւելի դրախտահովիտ մըն ալ կարծէ: Ու այդ դրախտահովիտի մէջէն հասող օձապտոյտ գետակն ալ կողմէն՝ կանանց արտերի ու պարտէզների մէջ շինուած է Պոռ հայ գիւղը, որ վաթսուն տունէ աւելի բնակիչ ունէր: Նարեկացիի անուան նուիրուած հոյակապ վանքէն զատ, զիւղին արեւելահարկի պարտէզների քով կը կանգնի նաեւ Ս. Եւրութիւն անուն քարակիր զիւղական եկեղեցին ու անոր անմիջապէս կից կը տեսնուի Ս. Սարգիս անունով կրտսերորդան տաճարի մը կրտսերու կաթողիկէն, որ իր զեղակերտ ճարտարապետութեան նմուշները՝ այնքան յստակ ու պարզ իր կմախքին վրայ ցոյց տալով, մեր հայրենասէր նախնեաց ճարտարապետական անցած փառքը կը վաւերէ: Այս եկեղեցիների քով վերլ, խաչարակի մը մէջ, կանդնուած կան մէկուկէս մէթրոյէն երեք մէթրօ բարձրութեամբ, մէկ մէթր լայն՝ Պիթիտի համբաւունք փխրաքարերէն՝ սքանչելի վափկութեամբ զեղակերտուած կոթողաձեւ խաչաքարեր: Ամենուն վրայ ալ հայկական գոթոթղարբով զանազան յիշատակութիւններ, անուններ ու թուականներ կան արձանագրուած: Եթէ չեմ սխալիր անոնցմէ ոմանց տարեցութիւնն գրեթէ հաւասար է վանքի ու եկեղեցիների թուականներին: 8—9 դարէ աւելի հնութիւններ:

ՆԱՀԱ—ՊԵՏ

(Շտուունակելի)

Ք Ր Ո Ն Ի Կ

—(—

Պատրիարքը անցեալ Գ. ամբողջ օրը Ազգ. Հիւանդանոցին մէջ անցուցեր և երկար խորհրդակցութիւններ կատարելէ Հոգաբարձութեան և բժշկական մարմինն հետ: Դժբախտաբար որոշում մը չեն կրցած տալ, և

յիմարները, որոնք խորհրդակցութեանց առարկան էին, դարձեալ իրենց մտքով ու շնորհակցներուն մէջ պլտի մնան:

Վանայ անգլիական հփոպատար էլ միաժին երթալով տեսակցութիւն մը ունեցեր է կաթողիկոսին հետ, ու յետոյ Պաթմաի ճամբով Անգլիա ուղեւորեր է:

Ուրախութեամբ կը ծանուցանենք թէ տօքթի. Յարութիւն Փափազեան, վկայեալ Բարիդի ատամնաբուժական վարժարանէն, Սօֆիայի մէջ վայելուն քննութիւն մը անցնելով, Պուլկարիոյ հողին վրայ իր արուեստը ի գործ դնելու արտօնութիւն ստացեր է: Համակրելի տօքթիօր իր ոչբացեալ հօր՝ Ստեփան Փափազեանի ընտր ձիրքերով օժտուած աղնու երկասարք մըն է, և իր յաջողութիւնը՝ Պուլկարիոյ հայ գաղութին մէջ օգտակար անդամ մը կաւելցնէ:

Թաւրիզէն «Մշակ»-ի կը գրեն թէ Պարիկ կառավարութիւնը ոչ թէ միայն Սալմաստի փոխ-առաջնորդ Խաչիկ վարդապետի սկսած շէնքը արգելեր է, այլ անոր անձը կասկածելի ամբաստանելով պահանջեր է որ հետանայ Պարսկաստանէն: Բարեբախտաբար վարդապետը ռուսահպատակ ըլլալով, իր հիւպատոսին պաշտպանութիւնը պիտի վայելէ:

Իււտորքի «Փայմզ» թերթը կը գրէ թէ նախագահ Պ. Մաք Բիւնի որոշեր է, իզմիրի կամ թրքական ուրիշ ու եւ նաւահանգստի առջեւ ամերիկեան մարտանաւերով նաւային ցոյց մը ընել, եթէ Թուրքիա չփութայ 1895 և 1896ի հայական ջարդերու միջոցին Հայաստանի այլ և այլ քաղաքներուն մէջ քնասուող ամերիկացի միտիոնարներուն հատուցում ընել:

Թուրքաէ եկած տեղեկագիր մը կը հաղորդէ թէ այն տեղի հայ որբանոցին մէջ 52 որբեր կան երկու ուսուցչի և հինգ մայրապետներու հսկողութեան տակ, որոնք տանտիկնոջ և խնամածուի դեր կը կատարեն:

Ռուսներ Ծ. կարապետ քահանային աւագութեան տիտղոս տրուած է պատրիարքական կոնգակով:

Թուրք կառավարութիւնը էրզրումի և Մանասորի հրամանատարներուն տեղեկագրին վերայ, սպառազինական բարենորոգումներ կը մտնէ այդ կողմերը: Լեւոնային ու զաշտային հրճամաններուն տեղ սրիշներ դրուել են: Համիտիէ հեծելագուններուն նոր կազմակերպութիւն մը պիտի տրուի:

Սօֆիայի եղեռնագոտ առեանը սկսած է զբաղիլ էֆթիմը և ընկերներուն գատով, որոնք Պուլկարիոյ վարական նովինի լրագրին Տնօրէն Պ. Մաքի գոնակին սպաննած էին:

Սօֆիայի համալսարանին ուսուցիչ Պ. Քովաչով, որ քանի մը օր առաջ մեռաւ, իր ամբողջ հարստութիւնը՝ քսան հազար ֆրանք, նոյն համալսարանին կտակեր է. իսկ իր մատենագրանը, որ տասը հազար ֆրանք կարծէ, նուիրել է Սելանիկի պուլկար վարժարանին:

Մարզուանի մէջ մեծ հրդեհ մը ծագելով, հարիւրի չափ շէնքեր հրոյ ճարակ եղած է:

Ս Պ Ի Պ Ո Ղ Ա Ք Ա Ր

Կը խնդրենք մեր ընտր այն բաժանորդներէն որոնք տակաւին Բ. վեցամսեան չեն վճարած,

ինչպէս նաեւ անոնցմէ՝ որոնք սկիզբէն ի վեր «Շարժում»-ը կանոնադրապէս ստանալով հանդերձ, մինչև այսօր սանդիմ մը իսկ չեն զրկած խմբագրութեանս, որ՝ այդ վճարումները «անմիջապէս» ընելու ժամանակը հասած համարեն, խորհելով թէ թերթ մը հրատարակ հանելը զայն կարգաւու չափ գիւրի գործ չէ, այլ նիւթական, մասուորական և ֆիզիքական ահագին զոհողութիւններու կը կարօտի:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊԲԵՐ

ԿՐԷՏԷՆ ԼՈՒՐԵՐ

Եւրոպացի զինուորները հետզհետէ իրենց երկիրները կը դառնան: Կրէտացիները եռանդագին ցոյցեր կընեն այս հեռացող ազատարարներուն: Եւ սակայն 4000ի չափ եւրոպացի զինուորներ պիտի մնան այնտեղ, մինչև որ տեղացիներէն կանոնաւոր զօրագնդեր պատրաստուին:

Մովակայներու որոշումով ամբողջ կղզիին պաշտօնական լեզուն յունարէնը պիտի ըլլայ:

Թուրքերուն մեկնելուն պէս թուրք հրատարակագրեր «Մէթանէթ» (յարաս եւութիւն) անունով թերթ մը սկսած են հրատարակել: Տնօրէնը, Նուրի պէյ, ժէօն Թիւրքերու կուսակցութեան կը պատկանի: Կը կարծուի թէ Կրէտէն թուրք յեղափոխականներու գործունէութեան կարեւոր կեդրոն մը պիտի դառնայ:

Քրիստոնեայներու զինաթափութիւնը կը շարունակուի և հետաքրքրական ձեւակերպութիւնով մը կը կատարուի, Իւրաքանչիւր քաղաքացի կարգաւ կը ներկայանայ, իր վէնքերը կը յանձնէ և ընկալագիր մը կը ստորագրէ, որուն մէջ յայտարարած կըլլայ թէ ուրիշ ու է զէնք պահած չէ: Եթէ երեք մէկուն տունէն զէնք պտնուի, պահողը տասը սկիտուղանքի և տաս ամսուան բանտարկութեան կը դատապարտուի:

Ռուսիա, Փրանսա, Իտալիա և Անգլիա մէջ մէկ միլիոն ֆրանքի փոխառուութիւն մը պլտի ընեն

Կրէտէի նոր կառավարութեան : Կառավարութեան իշխանին , իր Բարձրագոյն Քոմիտէի պաշտօնը ուղղակի տէրութիւններէն ստանալով , Սուլթանին հաւանութեան սպասելու պէտք չկայ : Կըսուի թէ այս պաշտօնավարութեան շրջանը առաջին անգամ , երկու կամ երեք տարուան համաշարի ըլլայ :

Թէֆիք փաշա վերջերս Պոլսոյ զեռնայններուն այցելելով , անոնց հաղորդած է թէ , Սուլթանը իմացած ըլլալով Երկիրոս իշխանին անուանումը , կ'իմացնէ թէ այս մասին իր հասանութիւնը չպիտի տայ և պիտի բողոքէ այս ընտրութեան դէմ : Այս քաղաքէն կախած է այս անամէջ սպառնալիքին :

Թ Ո Ւ Բ Ի Ս

Շէյխ Իւլ Իոլամը յենով պատերազմական , արդարութեան և արտաքին գործոց նախարարներուն համամտութեան , յայտարարած է նախարարական խորհրդին մէջ , թէ Թուրքիոյ ներկայ կացութիւնը շատ յոռի է և չը կրնար յարատեւել առանց տագնապ մը առաջ բերելու : Կըրէտէի գործերուն վրայ խօսելէ ետքը , երկրւոյ յայտներ է նաև Մակեթոնիոյ կացութեան վրայ :

Թուրք կառավարական շրջանակներու մէջ կը կարծուի թէ տէրութիւնները բան մը կը պատրաստեն և թէ ու է ծանրակշիւ դէպք մը պիտի պայթի Թուրքիոյ զլխուն :

Կը հաւատեն թէ Թուրքիա վերջին պահուն , նկատելով թէ Կրէտէն արդէն ձեռքէ ելած ապրանք մըն է , զայն Ռուսիոյ շրջանորհել առաջարկեր է , պայմանաւ որ սա հրաժարի իր դրամական ծանօթ պահանջներէն :

Խ Ա Ռ Ն Ի Ո Ւ Բ Ի Ր

Նախկին Մեծ Ապարքոս , և Կրէտէի զինուորական կառավարիչ ձէջվատ փաշան Իսմասկոսի մէջ ձեռքակալուելով բանտարկուեր է Կրէտական գործերու պատճառով :

Պուլիարական գործակառար Պ. Մարքով նոր բողոքներ մատուցած է Գրան , թուրք զինուորներու կողմէ գործադրուած սահմանազլխի թարմ բունարարութեան առթիւ :

Այս բողոքներուն մէջ խիստ լեզու մը գործածուած է :

Ուէնսթրիստըրի դուքսը բաց նամակ մը հրատարակելով , իր ցաւը և նողկանքը յայտնած է Գերմանիոյ կայսեր , ընդունելուն համար այնպիսի վեհապետի մը հիւրընկալութիւնը , որ պատմութեան մէջ չլսուած ոճերներու շարքով մը «ինքզինքը դուրս ձգած է քաղաքակրթութենէն» :

«Քորէնուրոնտանս Բոյիթիք» կը տեղեկանայ թէ զէնընկեցութեան դեպքանաժողովին գումար

րումը յառաջիկայ փետրուարի կիսուն տեղի պիտի ունենայ : Հաւանական է որ էրութեանց հրախրագրերը զրկուին ամսոյ վերջերը :

Պուլիարիոյ իշխանուհին որ փափուկ դիրքի մը մէջ է , մտերս Ապաղիա պիտի երթայ , ուր կը գտնուի նաև Քլէմանդին իշխանուհին :

Մտերս Երթու մեծ դուքսը քսանի չափ սպաներու ընկերակցութեամբ , Պոլսու պիտի երթայ , Սան-Սանֆանտի մօտ կառուցուած ռուս եկեղեցիին և յիշատակարանին բացման նախագահելու :

Քաղաքական աշխարհի մէջ ահագին ազմուկ հանած է սալուրը թէ Վիլհելմ կայսրը Սուլթանի հասանութեամբ ձեռք պիտի անցնէ Երկրիկան Տրիպոլի մէջ մասը որ կից կը գտնուի Թունուզի : Բախտի հեղուցութեամբ մը ֆուսսա և Գերմանիա , Աֆրիկէի մէջ եւս քովէ քով պիտի գտնուին : Սուլթանը այս զիջումը ընելու պատրաստակամութիւն ցոյց տուեր է Տրիպոլիսը զերծ պահելու համար Քրանսական արշաւանքներէն :

Ամսոյս 12ին , Հուովմի մէջ բացուած է հակահիշխանական համաժողովը : Թուրքիոյ կողմէն ներկայ են Հուովմի օսմ. զեռնայնը և Պոլսէն զրկուած երկու թուրք պաշտօնատարներ :

Պրանսայի և Եսալիոյ միլիտարական նոր գաշնագիր մը կնքուած է :

Կարինի մէջ ամերիկեան հիւպատոսութիւն մը պիտի հաստատուի , որուն հասանած է թուրք կառավարութիւնը :

Պրանսական կառավարութիւնը Պոլսոյ թնդանօթածիզ զօրքերու հրամանատարին հրաման տուեր է որ Լա ժիռոնտի մուսքին և Բուսայնի , Սիւզայի ու Վէրտոնի ամրոցները նոր դրութեամբ թնդանօթներով սպառազինուին , վասն զի հիմակուանները տասներկու տարի առաջուան թնդանօթներ են : Մարտկոցներու պատնէշներն ալ պիտի փոխուին և արգի դրութեամբ ումբերու գէմ դնելու կարող նորեր պիտի դրուին :

Մանիլայէն կը հեռագրեն թէ վերջերս ամերիկեան օստիկանութիւնը միջամտեր է երեք ընկերներու , որոնք կը կոտէին : Ասոնք գաշոյնով զարկեր են օստիկանները , որոնց մէկը մեռեր է : Բնիկներէ մէկը բէվոլվէրով սպաննուեր է և միւսները ձերբակալուեր են :

Սպանիոյ ինամակալ թագուհին ընդուներ է Մարեշալ Պլանքոյի հրաժարականը Քուպի կառավարութենէն :

Գերմանիոյ կայսրը և կայսրուհին Բուր մամաներ են և ոչ ջունուեր են նաւահանգստէն արձակուած թնդանօթներով :

Ս Պ Ա Ն Ի Ս Ե Ն Ս Մ Ե Բ Ի Կ Ն

Անցեալ երեքշաբթի օր հաշտութեան յանձնաժողովը կարևոր նիստ մը ունեցած է : Ուշիկութեան հասած վերջին հրահանգներուն համաձայն , ամերիկեան պատուիրակները պաշտօն ունենին , փակել սպանիական զերիշխանութեան խնդիրը զոր Ամերիկան ջնջուած կը նկատէ , և հաշտութեան վերջնական պայմանները ձեւակերպել , ամերիկեան նախարարութեան պահանջներուն համաձայն : Իսկ Սպանիացի պատուիրակները պարտաւոր պիտի ըլլալին սկզբունքով ընդունիլ պանք առանց իսկական բարեփոխումներու , ապա թէ ոչ բանակցութիւնները պիտի խըզուէին :

Երկու կողմերու պատուիրակները , իրենց փոխադարձ սոգիւմանները փոխանակելէ ետքը , իրարմէ զատուեցան , երկրորդ օրը նորէն զումարուելու համար : Ենտարակուսելի է թէ ամերիկեան պատուիրակները մերժած են սպանիացիներուն առաջարկած իրաւաստութեան առաջարկը , և պնդած են որ Ուշիկութեանը բրթօքօլին երրորդ յօդուածը իրենց ըմբռնած էր պով ընդունուի :

Փիլիպպեան արշիպելագոսին զերիշխանութենէն հրաժարման փոխադէն , Ամերիկան քսան միլիոն ֆրանքի հատուցում մը ընել առաջարկած է Սպանիոյ , ինչպէս նաև առևտրական այլ այլ առանձնաշնորհումներ փիլիպպեաններուն մէջ : Տարակոյս չկայ թէ Սպանիան , այսօր վաղը իր հաստատական պատասխանը պիտի տայ , եթէ արդէն մինչև հիմա առած չէ :

Տ Ր Է Յ Ֆ Ի Ի Ս

Բարիկեան թերթերը կը հաստատեն հեռագրական այն լուրը թէ գաղթային նախարար Պ. Կիլլէն , Եսալարայ Քորհուրդին որոշմամբ , հրահանգ զրկեր է Կիլիանայի կառավարիչին որ Տրէյֆիւսի նկատմամբ ի գործ դրուած խտու թիւները քիչ մը մեղմացուին : Բանտարկեալը կարտօնուի պոստներ կատարել Սատանայի կղզիին անտառուա չեղող մասերուն մէջ , այսինքն երեքշոբու հէքթար տարածութեամբ տեղ : Ընդհակառակը , կը հերքուի այն լուրը , թէ Վճռաբեկատեանը որոշեր է դատաւոր Պ. Աթալէնը Սատանայի կղզին զըրկել , Տրէյֆիւսը հարցաքննելու համար : Աելի հաւանական է որ քարտրականը Բարիլ փոխադրուի . պատերազմական նախարարը արդէն իսկ հրախրեր է Բարիլի զինուորական կառավարիչը հարկ եղած հրամանները տալ , Տրէյֆիւսը Շէքը-Միտի զինուորական բանտը ընդունելու համար :

Խ Մ Բ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն « Ն Ա Ր Ժ Ո Ւ Մ »

Կը ապագրուին ամէն լեզուէ այցեատման , հասցէատման , նամակաղլուխ , հարսանեկան հրախրաղլի , մահաղլ , ինչպէս նաև պրօշիւններ :

Գիներն յոյժ զլարամուտչելի : Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին :

Պ Օ Ր Ս Ա

Վառնա 13 Նոյեմբեր

Պ Ո Ւ Ղ Տ Ա Յ

Վազօն , լիպրա 55—58 , հէքթօլ 9—9.50 ֆրանք  
Արապա , լիպրա 55—60 , հէքթօլ 9—12 ֆրանք

Ա Ր Ֆ Ա

Լիպրա 42—50 , հէքթօլ 5.80—6.20 ֆրանք

Մ Ի Ս Ի Ր

Վազօն , 55—57 լիպրա , 6 80—7 Ասապա , 55—60 լիպրա , 6—6.20  
Կիւնկէ 8—10 վազօն , 25—30 առապա կէլմէքաէ տիր :

Թ Ո Ւ Լ Ս Յ

Կիւնկէ 20—25 արապա կէլմէքաէ տիր 5.40—5.70 ֆրանք

Տ Ա Ր Ը

Կիւնկէ 5—6 արապա կէլմէքաէ տիր 58—60 լիպրա , 4.60—5 ֆրանք

Ֆ Ա Ս Ո Ւ Լ Ե Ս

Կիւնկէ 8—10 առապա կէլմէքաէ տիր 100 օգգաւր 18—22 ֆր. մալա կէլօրէ : Առապա մուամէլէտի նարօլոն 21 ֆրանք հիսապր իլէ տիր :  
Կիւնկէ 25—30 վազօն , 150—200 արապա պուդտայ , 20—25 արապա արապա կէլմէքաէ տիր :

Վ Ա Ր Գ Օ

Ե Ր Կ Ո Ւ Ս Է Ր

(Հ Ա Յ Յ Ե Ն Ա Փ Ո Ւ Ս Կ Ա Յ Ն Կ Ե Ս Ա Ք Ի Թ Ե)

( Գ Ի Ն 1 Ֆ Ր Ա Ն Գ )

Մնացած սակաւաթիւ օրինակները կը ծախուին Վառնայի մէջ Շարժումի խմբագրատունը , Ֆիլիպպէ՝ Տ. Անտոն Կոչի մօտ , Ռուսուլք՝ Հայկ Մալախեանի սրճարանը , Սօֆիա՝ Տ. Մուշեղ Արժրուհիի քով :

Մտերս մամուլին կը յանձնուին յոյն հեղինակին «Բոնուութեան գոհերը» :

« Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ »

Վառնայի մէջ կը վաճառուի Մուսալլա , թահմիզ կէօղիպէտի քեանի խանութը , եւ Ապալարհանման մզկիթին դէմը հայկական գրատունը : Ա. Զարպահանէլեանի քով :

Գ Ո Ւ Հ Ր Ո Ս Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ս . Ս Ա Պ Ա Ն - Գ Ի Կ Ե Ն Ա Ն

Ե Ի Ր Ո Պ Ա Յ Ի Կ Ա Ղ Ա Կ Ա Ն Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ը Բ Ե Ր Լ Ի Ն Ի Գ Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ը Թ Ե Տ Տ Թ

Գ Ի Ն 1 Ֆ Ր Ա Ն Գ

Կը վաճառուի Շարժումի խմբագրատունը :